պայմանագիր կնքելու որոշումը իրավաչափ է, հետևաբար հայցվորի պահանջն անհիմն է և ենթակա է ամբողջությամբ մերժման:

2.3. <u>Դատական ծախսերը</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Այս պարագայում, նկատի ունենալով, որ հայցն ամբողջությամբ ենթակա է մերժման, իսկ դատական ծախսերը բաշխվում են բավարարված հայցապահանջներին համամասնորեն, ուստի դատարանը գտնում է, որ որպես դատական ծախս՝ նախապես վճարված 139186 ՀՀ դրամ պետական տուրքի գումարի պահանջը ևս ենթակա է մերժման:

Անդրադառնալով որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար՝ 200000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման հայցվորի պահանջին՝ դատարանը գտնում է, որ հայցը մերժման ենթակա լինելու պայմաններում ենթակա է մերժման նաև 200000 ՀՀ դրամի՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման պահանջը ևս:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում, ներկայացվել է պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճ, հետևաբար օրենքով սահմանված կարգով վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>3. Եզրափակիչ մաս</u>

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101, 104, 109, 189, 191, 192, 194, 198, 234.5.-234.12., և 360-362 հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Անսերվ>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԾՁԲ-23/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.12.2023թ. թիվ 3 արձանագրության 3-րդ կետով <<Անսերվ>> ՍՊ ընկերությանը 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և <<Անսերվ>> ՍՊ ընկերության հետ 7-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշումն

անվավեր ճանաչելու, ինչպես նաև նախապես վճարված՝ 139186 ՀՀ դրամ պետական տուրքի և 200000 ՀՀ դրամ՝ փաստաբանի խելամիտ վարձատրություն գումարներ բռնագանձելու պահանջների մասին հայցը մերժել:

2. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԵՐԵՄ ԵՍՈՅԱՆ